ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/12Շ-1

ք. Երևան **« 05 » օգոստոսի 2019թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Մ.Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու),մի կողմից, և <<Շիրինշին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Արմենակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի 1,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝

ա) առաջին չափաբաժնի մասով՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 90 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա

Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 61 500 000 (վաթսունմեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 10 250 000 (տասը միլիոն երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[42] .

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[43] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[42] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[43] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[44]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուին կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

---

[44] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[46] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 02578338 Հ/Հ 900011025823 /ստորագրություն/ Կ.Տ	**ՇԻՐԻՆՇԻՆ ՍՊԸ** **Ք. Երևան, Տարոնցու փ., 7/2, 27** **ՀԱՅԷԿՈՆԱԲԱՆԿ ՓԲԸ** 16300045743 01823378 Ա. Արենակյան /ստորագրություն/

Հավելված թիվ 1
«05» օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/12Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*[48]
ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի 1,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը*	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I. 2-րդ փողոց				
1	Փողոցի եզրերի քարաբեկորների բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	5.0	2.350	11.750
2	Կուտակված գրունտի (IV կարգ) բարձում ձեռքով , տեղափոխում ա/ինքնաթափով լցակույտ 2.0կմ	տոն	30.0	1.224	36.720
3	IV6գ գրունտի մշակում ճանապարհի, ուղիների և մուտքերի ճանապարհի հագուստի տաշտակում էքսկավատորով (0,65մ³), բարձում, տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	132.0	1.564	206.448
4	IV6գ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 10մ կուտակումով , բարձում էքսկավատորով (0,65մ³), տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	245.0	1.679	411.355
5	IV6գ գրունտի մշակում և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	35.0	7.140	249.900
6	Տաշտակի համահարթեցում	մ²	2069.5	0.018	37.251
7	Ավազակոպճային հարթեցնող շերտ h=10սմ	մ³	206.95	5.499	1 138.018
8	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	2069.5	3.172	6 564.454
9	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	1851.0	5.475	10 134.225
10	Տաք մանրահատիկ ա/բետոն մուտքերում և ուղիներում „Բ"տիպ h=4սմ	մ²	218.5	4.395	960.308
11	d=0.5մ բետոնե քայքայված վաքերի ապատեղակայում, բարձում, տեղափոխում լցակույտ 2.0կմ, 2հատ /V= 0.24մ³, G=0.6տոն /	մ³	0.48	19.273	9.251
12	d=325.մմ մետաղական վնասված և կոռոզացված կիսախողովակի ապատեղակայում, տեղափոխում բազա	գծ.մ	93.5	1.473	137.726
13	d=219մմ մետաղական կոռոզացված խողովակի ապատեղակայում, տեղափոխում բազա	գծ.մ	41.5	0.922	38.263
14	IV6գ գրունտի մշակում խողովակների և կիսախողովակների խրամուղում էքսկավատորով (0,65մ³), բարձում, տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	55.0	1.563	85.965
15	Նույնը ձեռքով, տեղում կուտակումով	մ³	16.0	4.815	77.040
16	Ավազե շերտի փռում տեղադրվող խողովակների և կիսախողովակների տակ h=10սմ	մ³	14.5	5.562	80.649
17	Խողովակների և կիսախողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	241.3	1.718	414.553
18	Մետաղական կիսախողովակների տեղադրում d=426մմ; 1գծ.մ=20.8կգ; δ=4մմ	գծ.մ	195	16.711	3 258.645
	Խարսխաձողեր AIII Ø14մմ AIII, L=50սմ (յուրաքանչյուր 5մ-ից հետո)	տոն	0.0604	560.364	33.846

19	Մետաղական խողովակների տեղադրում d=426մմ; 1գծ.մ=41.6կգ; δ=4մմ	գծ.մ	39	30.741	1 198.899
	Խողովակի մուտքում մետաղական ցանց AIII Ø14մմ	տոն	0.0012	560.359	0.672
20	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=31.7կգ; δ=4մմ	գծ.մ	25.0	23.852	596.300
	Միացման միաձույլ բետոն B20	մ³	0.60	55.525	33.315
21	Մետաղական խողովակների տեղադրում լայնական ուղղությամբ /3 տեղ/ d=325.մմ; 1գծ.մ=31.7կգ; δ=4մմ	գծ.մ	33.5	23.852	799.042
22	Հետադարձ լիցք ձեռքով	մ³	16.0	1.648	26.368
23	Ջրընդունիչ հորերի հիմնատակի խճե շերտ h=10սմ	մ³	0.5	13.628	6.814
24	Ջրընդունիչ հորերի միաձույլ բետոն B20 /5 տեղ/	մ³	3.0	79.847	239.541
25	Ջրընդունիչ հորերի մետաղական շրջանակի և ճաղաշարի իրականացում	տոն	0.2123	207.692	44.093
	Պողպատե շրջանակ L50x50x5մմ, L=60սմ; 1 գծ.մ=3.77կգ	գծ.մ	10.73	2.684	28.799
	Խարսխաձողեր AIII Ø14մմ; 1 գծ.մ=1.208կգ, L=60սմ	տոն	0.00539	560.297	3.020
	Ամրանային ճաղաշար AIII Ø30մմ; 1 գծ.մ=5.549կգ	տոն	0.16647	560.359	93.283
26	Ջրընդունիչ հորերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	2.5	1.169	2.923
27	Լայնական խողովակի ապատեղակայում, տեղափոխում բազա d=152մմ	գծ.մ	9.0	0.640	5.760
28	Նույն տեղում նոր մետաղական խողովակի տեղակայում d=152մմ; 1գծ.մ=14.6կգ; δ=4մմ	գծ.մ	9.0	10.880	97.920
29	IV6գ գրունտի մշակում հենապատի խրամուղում էքսկավատորով (0,65մ³), բարձում, տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	8.0	1.563	12.504
30	Նույնը ձեռքով, տեղում կուտակումով	մ³	7.0	4.815	33.705
31	Խճե շերտ հենապատի հիմնատակում h=10սմ	մ³	0.8	13.629	10.903
32	Հիմքի խամքարե բետոն B20	մ³	2.8	55.777	156.176
33	Իրանի խամքարե բետոն B20	մ³	3.5	56.831	198.909
34	Հետադարձ լիցք ձեռքով	մ³	7.0	1.648	11.536
35	50x10սմ չափսի թասակի միաձույլ բետոն B-20	մ³	0.35	188.686	66.040
36	Հենապատի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	17.0	1.169	19.873
37	Միաձույլ բետոնե եզրաշար (մատուռի մոտ)10x20սմ B-15	մ³	0.22	61.815	13.599
				Ընդհանուրը	**27 586.360**
	II. 4-րդ փողոց				
1	Փողոցի եզրերի քարաբեկորների բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	5.0	2.350	11.750
2	Կուտակված գրունտի (IV կարգ) բարձում ձեռքով , տեղափոխում ա/ինքնաթափով լցակույտ 2.0կմ	տոն	20.0	1.224	24.480
3	IV6գ գրունտի մշակում ճանապարհի, ուղիների և մուտքերի ճանապարհի հագուստի տաշտակում էքսկավատորով (0,65մ³), բարձում, տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	130.0	1.564	203.320
4	IV6գ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 10մ կուտակումով , բարձում էքսկավատորով (0,65մ³), տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	190.0	1.679	319.010
5	IV6գ գրունտի մշակում և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	35.0	7.140	249.900
6	Տաշտակի համահարթեցում	մ²	1775.0	0.018	31.950
7	Ավազակոպճային հարթեցնող շերտ h=10սմ	մ³	177.50	5.499	976.073

8	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	1775.0	3.172	5 630.300
9	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	1401.0	5.475	7 670.475
10	Տաք մանրահատիկ ա/բետոն մուտքերում և ուղիներում „Բ"տիպ h=4սմ	մ²	374.0	4.395	1 643.730
11	d=250մմ թուջե խողովակի ապատեղակայում, տեղափոխում բազա	գծ.մ	85.0	1.002	85.170
12	IV6գ գրունտի մշակում խողովակների խրամուղում էքսկավատորով (0,65մ³), բարձում, տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	13.0	1.480	19.240
13	Նույնը ձեռքով, տեղում կուտակումով	մ³	12.0	4.815	57.780
14	Ավազե շերտի փռում տեղադրվող խողովակների տակ h=10սմ	մ³	3.0	5.562	16.686
15	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	80.0	1.718	137.440
16	Հետադարձ լիցք ձեռքով	մ³	12	1.648	19.776
17	Ջրընդունիչ հորերի հիմնատակի խճե շերտ h=10սմ	մ³	0.4	13.629	5.452
18	Ջրընդունիչ հորերի միաձույլ բետոն B20 /4 տեղ/	մ³	2.8	79.847	223.572
19	Ջրընդունիչ հորերի մետաղական շրջանակի և ճաղաշարի իրականացում	տոն	0.16983	207.692	35.272
	Պողպատե շրջանակ L50x50x5մմ, L=60սմ; 1 գծ.մ=3.77կգ	գծ.մ	8.58	2.684	23.029
	Խարսխաձողեր AIII Ø14մմ; 1 գծ.մ=1.208կգ, L=60սմ	տոն	0.00431	560.359	2.415
	Ամրանային ճաղաշար AIII Ø30մմ; 1 գծ.մ=5.549կգ	տոն	0.13317	560.359	74.623
20	Ջրընդունիչ հորերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	2.5	1.169	2.923
21	Միաձույլ բետոնե եզրաշար 10x20սմ B-15	մ³	1.02	61.815	63.051
22	Առաջին ուղղուց հետո 0.25x0.5մ չափսի միաձույլ բետոնե անվահիրչ B20	մ³	3.4	77.209	262.511
23	Գոյություն ունեցող լայնական խողովակների ապատեղակայում, տեղափոխում բազա				
.	d=56մմ	գծ.մ	12	0.332	3.984
.	d=108մմ	գծ.մ	14	0.425	5.950
.	d=150մմ	գծ.մ	5	0.640	3.200
.	d=200մմ	գծ.մ	10	0.922	9.220
24	Նույն տեղում նոր մետաղական խողովակների տեղակայում				
.	d=76մմ; 1գծ.մ=5.4կգ; δ=3մմ	գծ.մ	12	4.338	52.056
.	d=108մմ; 1գծ.մ=7.77կգ; δ=3մմ	գծ.մ	14	6.136	85.904
.	d=152մմ; 1գծ.մ=14.6կգ; δ=4մմ	գծ.մ	5	10.880	54.400
.	d=219մմ; 1գծ.մ=21.2կգ; δ=4մմ	գծ.մ	10	15.857	158.570
25	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	17	1.718	29.206
26	Հենապատի բարձրացում միաձույլ բետոնով B20	մ³	2.1	67.984	142.766
27	Բետոնի մեջ (ուղղահայաց) d=24մմ,L=25սմ խորությամբ անցքերի փորում	հատ	60	1.210	72.600
28	Անցքերի մեջ ավազացեմենտե խառնուրդի լցում	մ³	0.012	115.333	1.384
29	խարսխաձողերի տեղադրում Ø14մմ AIII L=45սմ; 60հատ	տոն	0.0326	619.387	20.192
30	Հենապատի քանդված մասի վերականգնում միաձույլ բետոնով B20	մ³	0.5	67.984	33.992
				II.Ընդհանուրը	**18 463.351**
	III. 7-րդ փողոց				

1	Փողոցի եզրերի քարաբեկորների բարձում էքսկավատորով (0.65մ³), տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	3.0	2.350	7.050
2	Կուտակված գրունտի (IV կարգ) բարձում ձեռքով , տեղափոխում ա/ինքնաթափով լցակույտ 2.0կմ	տոն	20.0	1.224	24.480
3	IV6գ գրունտի մշակում ճանապարհի, ուղիների և մուտքերի ճանապարհի հագուստի տաշտակում էքսկավատորով (0,65մ³), բարձում, տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	165.0	1.564	258.060
4	IV6գ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 10մ կուտակումով , բարձում էքսկավատորով (0,65մ³), տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	328.0	1.679	550.712
5	IV6գ գրունտի մշակում և բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	54.0	7.116	384.264
6	Տաշտակի համահարթեցում	մ²	2735.0	0.018	49.230
7	Ավազակոպճային հարթեցնող շերտ h=10սմ	մ³	273.5	5.499	1 503.977
8	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով, 4.12տ/1000մ²	մ²	2735.0	3.172	8 675.420
9	Տաք մանրահատիկ ա/բետոն „Բ"տիպ h=5սմ	մ²	2658.0	5.475	14 552.550
10	Տաք մանրահատիկ ա/բետոն մուտքերում և ուղիներում „Բ"տիպ h=4սմ	մ²	372.5	4.395	1 637.138
11	d=0.5մ բետոնե քայքայված վաքերի ապատեղակայում, բարձում, տեղափոխում լցակույտ 2.0կմ /V= 0.24մ³, G=0.6տոն /	մ³	1.44	19.272	27.752
12	d=325.մմ մետաղական վնասված և կոռոզացված կիսախողովակի ապատեղակայում, տեղափոխում բազա	գծ.մ	22.0	1.481	32.582
14	IV6գ գրունտի մշակում խողովակների և կիսախողովակների խրամուղում էքսկավատորով (0,65մ³), բարձում, տեղափոխում լցակույտ 2,0կմ	մ³	97.0	1.563	151.611
15	Նույնը ձեռքով, տեղում կուտակումով	մ³	38.0	4.815	182.970
16	Ավազե շերտի փռում տեղադրվող խողովակների և կիսախողովակների տակ h=10սմ	մ³	21.0	5.562	116.802
17	Խողովակների և կիսախողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	380.0	1.718	652.840
	Մետաղական կիսախողովակների տեղադրում d=325մմ; 1գծ.մ=15.85կգ; δ=4մմ	գծ.մ	120	13.160	1 579.200
18	Մետաղական կիսախողովակների տեղադրում d=426մմ; 1գծ.մ=20.8կգ; δ=4մմ	գծ.մ	305	16.711	5 096.855
	Խարսխաձողեր AIII Ø14մմ AIII, L=50սմ (յուրաքանչյուր 5մ-ից հետո)	տոն	0.0664	560.364	37.231
20	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=31.7կգ; δ=4մմ	գծ.մ	113	23.852	2 695.276
	Միացման միաձույլ բետոն B20	մ³	1.70	55.525	94.393
22	Հետադարձ լիցք ձեռքով	մ³	38	1.648	62.624
23	Դիտահորերի սալերի ապատեղակայում , տեղակայում 1.2x1.2x0.2մ չափսի	հատ	7	14.872	104.104
24	Դիտահորերի վնասված սալերի ապատեղակայում (V=0.24մ³, G=0.6տոն), տեղափոխում լցակույտ 2.0կմ,	հատ	3	6.764	20.292
25	Դիտահորերի պատերի բարձրացում միաձույլ բետոնով B20 /9տեղ/	մ³	0.75	77.209	57.907
26	Դիտահորի բետոնե պատի իջեցում (կտրում) հարվածահատ մուրճով, բարձում ձեռքով, տեղափոխում լցակույտ 2.0կմ	մ³	0.12	47.708	5.725

27	Դիտահորի նոր սալերի տեղադրում 1.2x1.2x0.2մ չափսի, թուջե մտոց, թուջե կափարիչով	հատ	3	162.267	486.801
				III. Ընդհանուրը	**39 047.843**
				Ամբողջը (I+II+III)	**85 097.555**

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» ՝ 11% և ԱԱՀ-ն՝ 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02878338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՇԻՐԻՆՇԻՆ ՍՊԸ
Ք. Երևան, Տարոնցու փ., 7/2, 27
ՀԱՅԷԿՈՆԱՄԹԱՆԿ ՓԲԸ
1630003045743
ՀՎՀՀ 01823378

Ա. Աբմենակյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«05» օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/12Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի 1,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքների կատարման

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո
1	2-րդ փողոց	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո
2	4-րդ փողոց	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 70 օր հետո
3	7-րդ փողոց	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 50 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 90 օր հետո**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025828

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՇԻՐԻՆՇԻՆ ՍՊԸ
Ք. Երևան, Տարոնցու փ., 7/2, 27
ՀԱՅԷԿՈՆԱԲԱՆԿ ՓԲԸ
16300030015743
ՀՎՀՀ 01823378
Ա. Նրմենակյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«05» օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/12Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/5	ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի 1,0 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքներ	...	...	...	...	...	...	...	32 595 000.0	32 595 000.0	61 500 000.0	61 500 000.0	61 500 000.0	61 500 000.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ՇԻՐԻՆՇԻՆ ՍՊԸ
Ք. Երևան, Տարոնցու փ., 7/2, 27
ՀԱՅԷԿՈՆԱՄԲԱՆԿ ՓԲԸ
1630003045743
ՀՎՀՀ 01823378
Ա. Արմենակյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« 05» օգոստոսի 2019 թ կնքված
ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/12Շ-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«05» օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿՏՏՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/12Շ-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի անունը
Պատվիրատուի
Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/12Շ» ծածկագրով*
Հրապարակ բաց մրցույթի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «05» օգոստոսի 2019 թ.**

ՇԻՐԻՆՇԻՆ ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արթուր Արմենակյանի / նբի՝ 000499202, 21.12.2012թ, 011-ից,
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության* (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ ***ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/12Շ**** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՈԱ Քրեդիթ Ռեֆորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

1.	ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[49]

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ

ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

ՇԻՐԻՆՇԻՆ ՍՊԸ
ընկերության անվանումը

ՀՀ, ք. Երևան, Տարոնցու 7/2, 27
ընկերության հասցեն

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ՓԲԸ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

163003045743
ընկերության բանկային հաշվեհամարը

01823378
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Արթուր Արմենակյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ
02.08.2019թ.
Օր/ամիս/տարի

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___ թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **ՇԻՐԻՆՇԻՆ ՍՊԸ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ՓԲԸ**

6. Վճարողի հաշվի համարը՝ **163003045743**

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **01823378**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02578338

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 6 150 000 վեց միլիոն մեկ հարյուր հիսուն հազար ՀՀ դրամ

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ Հայկական դրամ , AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[49] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*